



## ՀԱՅՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

### ՎԱՐԴԱՍԱՆՑ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Արշակունյաց անկումից հետո հայոց եկեղեցուն վիճակված էր փոխարինելու առևելիքի թագավորությանը, հոգալու հայ իշխաններին ուղղություն տալու, նրանց միջնեղած վեճերը հարթելու, նրանց միաբանությունը կուիելու հարցերի լուծումը: Հայ ժողովով համար դա, անակնկալ փորձություններով հղի, չափազանց ծանր ժամանակաշրջան էր: Հայոց եկեղեցու և ավագանու առջև հրամայական խնդիր էր դրված, նենվելով ազգային հավատքի, մայրենի դպրության և մարտնչողական ուժերի վրա, պահպանել հայկազանց սերունդը արևելքի և արևմուտքի աշխարհակալ զավթիչների ճնշումներից և կլանումից:

Այս հայրենանվեր գործը գլուխ բերելու համար անհրաժեշտ էր նորր և ճկուն դիվանագիտություն, կրակուտ հայրենասիրություն, անձնազոհություն, անդուլ գործություն:

Պատմական անցքերն ու վավերագրերը հաստատում էր, որ ժամանակի հայ եկեղեցու գործիչներն ու ավագանին օժտված էին այս առարկնություններով: Դիվանագիտական այս հմտությունը կատարության մեջ պատվավոր դեր էր կատարում Հայոց իմաստուն Հայրապետ, մեծ հայրենասեր, փիլիսոփա, երաժիշտ, ուսուցապետ Սահակ Պարթևը, որին որդիարար լսում ու հարգում էին ոչ միայն հոգևոր պետերը, այլև հայրենասեր իշխաններից:

Վարդանանց ապատամբության նախօրյակին սահակ-մեսրոպյան շրջանի հայոց դիվանագիտությունը պայմանավորված էր պարսից տերությանը չհակադրվելու սկզբ-

բունքների վրա. Հայաստանը, իր կրոնական տարբերությամբ հանդերձ, չէր խախտում իր հավատարմությունը պարսից արքունիքի հանդեպ: Հոգևոր դասի գլխավորած ազգային դպրության ու մշակույթի առաջնորդացը չէր հակադրվում Տիգրոնի քաղաքական շահերին: Հայ ավագանին չէր թերանում իր պարտականությունների կատարման մեջ՝ պարսից տերության նկատմամբ: Հայոց այրուծին, Տիգրոնի հրամանին պատրաստ, բարեխղճությամբ կատարում էր իր զինվորական պարտականությունները՝ պարսկական բանակի շարքերում: Հայոց եկեղեցին և ավագանին աշխատում էին դիվանագիտորներն օգտվել երկու թշնամի կայսրությունների միջև տևականորեն բրոբրվող հակամարտություններից և, միաժամանակ, երկիրը շարձնել կայսրություններից մեկն ու մեկի հարդավանքների խաղաղը, խոսափել զինվորական աննպատակ երություններից և չխոսվել երկրի խաղաղությունը:

Դիվանագիտական այս քաղաքականությունը շուրջ քանի տարի ապահովում էր մարզպանական Հայաստանի խաղաղ զարգացումը, նրա ներքին ինքնավարության և նախարարությունների ինքնավար վարչաձեւի պահպանումը, երկիրը քրիստոնեության կրոնա-բարոյական կանոններով կառավարելու հարգը, ազգային հավատքի վրա հիմնված ապրելակերպի և ավանդությունների կենսահաստատումն ու խորացումը, ազգային դպրության ու մշակութային կյանքի վերելքը, ժողովրդի ազգովին համախմբումն ու ինքնանականացումը:

Դիմանագիտական այս քաղաքականությունից շատում էին թե՝ բրիսունյա Հայաստանը, թե՝ հետանո Պարսկաստանը: Եվ թվում էր, թե Տիգրոսը որևէ պատճառ չուներ հայ ժողովրդի դեմ բռնություններ գործադրելու: Բայց աղջակա չէ, պարսից արքունիքը համեր և հովաների կրթական ու մշակութային կապերի մեջ «զմեծ և զպիտակ»<sup>1</sup> Հայաստանը կորցնելու հետանկարից բացի ուրիշ ոչինչ չեր տեսնում: Այս մուսավիրության համար պարարտ հող էր ստեղծում Հայոց աշխարհի խաղաղ զարգացումը իր ազգային լուրջինակ քարքերով, որոնք ձևով և բովանդակությամբ խորթ էին պարսկական կրթա-քարոյական սկզբունքներին: Պարսից քաղաքագետների հասկացողությամբ՝ այս եղելությունը կարող էր համատագրական ոչ ցանկալի հետևանքներ ունենալ և, ի վերջո, բաժանել հայ և պարսիկ ժողովրդների պատմական ճամփանելու: Այս պատմառով էլ Տիգրոսը, սկսած 5-րդ դարի քառասնական թվականների կեսերից, այլև չեր գործանում հայ ազգային գործիչների հայաստարմությամբ և աներկրա ծառադրությունով: Նրանց հարկավոր էր ավելին. զրկել հայ ժողովրդին իր հայասիրած քարոյական, քաղաքական համոզմունքների, սովորութների, ավանդությունների, կացութաձևների հիմքերի հիմքից ազգային հավատքից, ետք շրջել հրա վերընթաց կանքի պատմության անհիլը, ներքաշել հրան պարսկական քարելարյան հետամեաց քարքերի հորձանուոր և վերջնականապես լուրացնել նրան: Կրոնը ազգային գաղափարախոսություն էր, քաղաքականություն, քարոյականություն, ապրելակերպ, մտածելակերպ, վարվելակերպ, ազգային պատկանելիության ու նկարգարի վայերացումը: Ահա ու ինչու Տիգրոսը իր քաղաքական հաշիվները կառուցում էր Հայաստանում քրիստոնությունը բռնի վերացնելու և իր դավանանքը հայերին պարտադրելու ենակետի վրա:

Պարսից արքունիքը իր այս հետապնդումը գույն քերելու իրըն նախանական պայման՝ գործնական քայլերի է դիմում Հայաստանը տնտեսապես ու քաղաքականապես թուլացնելու: 446 թվականին Հայաստանում անցկացվում է նոր աշխարհագիր և երկուսից երեք անգամ բարձրացվում բնակչության հարկերը<sup>2</sup>: Հարկման են ենթարկվում նաև հայոց եկեղեցին և վաներերում ապրող միանակյացները, որոնք մինչև այդ ազատվում էին հարկերից: Հոգևոր իշխանությունից վերցվում է երկրի դատական գործերը

<sup>1</sup> Տես Եղիշէ, Վասն Վարդանյա և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 23:

վարելու սխանդական իրավունքը և այն հանձնվում մի պարսիկ մոգականի: Պաշտոնից հետագվում է երկրի ներքին գործերը վարող հայ հայագարակեալը, որին փոխարինելու է գալիս մի պարսիկ<sup>3</sup>: «Եւ զայ ամեն ամենը՝ թերևս զիմարանութիւնն բակեցէ, և զմիանակեացն փախուցէ. և առ յոյժ արքատութեամ՝ ակամա դիմացեան յօրենու մոգուց»<sup>4</sup>:

Տիգրոսի գործակալ Դենչապուհը հսկողության տակ է առնում նաև հայ իշխանների գործությունը, բանարկությամբ թթանամությունը է սերմանում նրանց միջն. «Զնախարհաբեանն բանարկութեամբ արկ ընտ միմանսն, և յամենայն տան արար խոռվութիւն»<sup>5</sup>:

Հակառակ Հայաստանի քաղաքական ներքին իրավունքների բռնադատման այս կուպու և բնահաճ փատերի, հայ հոգևոր իշխանությունն ու ավագանին շարունակում են հաղաղ մնալ: Սակայն դրանով չի գորանու պարսից արքունիքը. 449 թվականի վերջերին սպառնալի պահանջ է ներկայացվում Հայաստանին, Վրաստանին և Աղվանիքին քրիստոնությունից հրաժարվելու, մազդեկանանություն ընդունելու մասին: Այս առիթով հայոց հոգևոր պետերն ու նախարարները ժողովի են հավաքվում Արտաշատում: Ի պատասխան Հազկերտի սպառնալի հրովարտակի, ժողովականները իրենց պատասխան նամակում հայտնում են, որ աշխարհիկ կյանքի հարցերում պատրաստ են անվերապահորեն ենթարկվելու թագավորի կամքին. «Ոչ միայն ըստ երկիրի մարդկան որպէս առ ականէ ըստ օրինի չար ծառայից ծառայել ձեզ, այլ կամա իսկ և յօժարութեամբ՝ յամենային զգեր կամս և զիրանան կատարեն»<sup>6</sup>: Ինչ վերաբերում է դավանակության պահանջին, ժողովականները դա համարում են անհնարին. «Յայս հաւատոց զմեզ ոչ ոք կարէ իսախուել, ո՞չ հրեշտակը և ո՞չ մարդիկ, ո՞չ սուր և ո՞չ հուր, ո՞չ ջուր, ո՞չ ամենայն զինչ և են դառն հարուածը»<sup>7</sup>:

Ստանալով Արտաշատի ժողովի պատասխան նամակը, Հազկերտ 2-րդը «կիոթով և անխափան» պարսից դուռն է կանչում «երիցունց աշխարհացն» իշխաններին<sup>8</sup>:

Հայոց, Վրաց և Աղվանից իշխանները

<sup>2</sup> Ա.Յ.:

<sup>3</sup> Ա.Յ.:

<sup>4</sup> Ա.Յ.:

<sup>5</sup> Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, ի Վեստիկ, 1875, էջ 127:

<sup>6</sup> Եղիշէ, Աշված աշխատություն, էջ 40:

<sup>7</sup> Ղազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 182:

կապվում են միմյանց հետ, խորհրդակցում ու եզրակացնում. «Թէ չէ խաղաղութեամբ, այլ կորստեան ոգուց է ստիպումն կոչման ապորիկ»<sup>8</sup>: Խշանները երկրնորանք առաջ են կանգնում. «Խորթէին, չերթալն որպէս ապստամբութիւն կարծեցուածել, և զերթալն խովուալը տարակուածին. հաշուկն զերթալն լաւագոյն»<sup>9</sup>:

Այս փաստերը վկայում են, որ հայ, ինչպես և վրացի ու աղվան իշխանները, գործը արյունահեղության չհացնելու Ակատառություն, պատրաստ էին համակերպվելու Տիգրոնի անգամ «ոչ ըստ արքունի արժանաւորութեան»<sup>10</sup> տնտեսական ու քաղաքական բռնություններին: Նրանք թեն զգում էին, որ Տիգրոնում իրենց համար որոգայլու հուրթում, բայց ապացուցելու համար, որ իրենք ապստամբելու մտադրություն չունեն, ընդհանուր համաձայնության են գալիս՝ ընդունել Հազվերսի սպառնալի հրավերը: Խշխանները թերևս նաև վերջին փորձն էին անում լեզու գտնելու թագավորի հետ, բայց ոչ իրենց գաղափարական դիրքերը զիշելու գնով: Այս սպառնառով էլ, մեկնելուց առաջ, նրանք Ավետարանի վրա «անքակ և աներկեան» երդում են ընդունում. «Թէ երթամբ, այս, այլ ուրանալ գարարիչն երկնի և երկրի ոչ հաւանիմք»<sup>11</sup>:

Տիգրոնում իշխանները Հազվերսին հայտնում են, որ նրան ճանաչում են որպէս իրենց թագավոր, որն «իշխանութիւն» ունի. «սպառնալի և կեցուցանելի»<sup>12</sup>: Նրանք նաև հիշեցնում են թագավորին, որ հայերը, սկրսած Ծապուհ Յ-րի օրերից (385—388), թեն պարսից հպատակությունն ընդունել են որպէս քրիստոնյա ծողովորդ, բայց «...միրով կատարէին զամենալի հրաման բանի նորա, և բազում անգամ ի նմանէ մեծապարգր լինէին: Եւ յայնց ժամանակաց մինչեւ ի բո հայրենի աթոռող՝ և մեր զնոյն ծառայութիւն ծառայեցաք, բայց թերևս քեզ լաւագոյն բան զառաշնոցն»<sup>13</sup>:

Նախարարները փորձում են համոզել արքայից արքային, որ դպավանաքի տարրերությունը թե՛ անցյալում, թե՛ երկայում չի խանգարել և չի խանգարելու իրենց հավատարմությանը պարսից արքունիքի հանդեպ. «Չայս ասելով ցուցանէին զքաշութիւն արութեանցն լաւագոյն բան զառաշնոցն ըստ զինուրութեան կարգի: Խսկ զմտից և զա-

կից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս»<sup>14</sup>:

Ոչ մի տրամաբանական բացատրություն չի ազդում մոլեգնած թագավորի համառության վրա. նա կորականապես հայտարարում է. «Վնաս համարիմ ընդունելի ի գաճա արքունի զիարկու աշխարհին ձերոյ. քանզի տգիտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց»<sup>15</sup>:

Թագավորը սպառնում է. «...Եթէ ոչ վաղի ընդ առաւօտն, ընդ երևումն սրանչելույն, ընդ իս իրաքանչիւր ծունը նմա ոչ երկնեսչիք՝ խստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնն չարշարանացն ի վերայ ածելով, մինչեւ ալկամա կատարիցէք զկամս հրամանաց իմոց»<sup>16</sup>:

Հազվերսի նախազգուշացնում էր. «Ոչ կարէք աւերել զամենապ ամուրս իմ. և ոչ որում ցանկացնեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են չարչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անձանապարհ տեղիս, որ և բազում ի ձէնջ ի խորչակէ երթալն սատակիցին, և մնացեալըն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելու: Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փոքր, և զկին և զորդիս ի Խուժատառան տամ խաղացուցանել. և զեկենեցիս և զոր անուանէք վկայարան՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդդիմ դարձեալ գտցի, կոխան եղեալ գազանաց՝ անողորմ մեռանիցից»<sup>17</sup>:

Այս սպառնալիքից հետո նախարարները «առ վայր մի» լուս են<sup>18</sup>: Սպառնապետ Մամիկոնյանը «աներկիի և քաջամիտ մտօք» հայուարարում է, որ ինքը պատրաստ է, ինչպես միշտ, այսուհետև ևս հավատարմությամբ ծառայելու արյաց արքային. «Բայց զօրէնս՝ զոր ուսայ յԱստուծոյ ի մանկութեանէ իմմէ՛ թողով և ընդ երկիւի մարդոյ փոխանակել՝ չէ հնար»<sup>19</sup>:

Նախարարները ժամանակ են խնդրում «խորին ընդ միմեանս»<sup>20</sup>:

Հազվերսի ներքին խորհրդականներից մեկը, որ գաղտնի քրիստոնեություն էր ընդունել և «մեծապէս հոգ տանէր հնարից կենաց վշտացելոցն», մի քանի նախարարների

<sup>8</sup> Անդ:

<sup>9</sup> Անդ, էջ 182—183:

<sup>10</sup> Եղիշէ, Աշված աշխատություն, էջ 28:

<sup>11</sup> Ղազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ

188:

<sup>12</sup> Անդ, էջ 186:

<sup>13</sup> Եղիշէ, Աշված աշխատություն, էջ 45:

<sup>14</sup> Անդ:

<sup>15</sup> Անդ, էջ 48:

<sup>16</sup> Եղիշէ, Աշված աշխատություն, էջ 44—45:

<sup>17</sup> Անդ, էջ 48:

<sup>18</sup> Ղազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ

188:

<sup>19</sup> Անդ, էջ 189:

<sup>20</sup> Անդ, էջ 140:

միջոցով խորհուրդ է տալիս ստերես ընդունել պարսից դավանանքը. «Զի առ անգամ մի ի նեղութեան զանձինս ապրեցուցեն»<sup>21</sup>:

Նախարարները համաձայնվում են ստերես համակերպել Հազկերտի հրամանին: Սակայն Վարդան զրավարը չի համապահվում նրանց ընդունած ստերես որացման համական պայմաններին. «Մի լիցի ինձ ստել արարշին իմում պատճառաօք և կամ ճշմարտութեամբ, և մի որանալ զայտ՝ առաջի անօրէն և մահկանացու ազգի»<sup>22</sup>: Մոլաց «այր համեստ, մոտացի և քաջ» Արտակ իշխանի և վրաց Աշուաշ բդեշին նորոգութեարը նույնական արդյունք չեն տալիս. Վարդան Մամիկոնյանը մնում է անդրդվելի:

Մի քանի հայ մոտավորականներ, հիմք ընդունելով Ղազար Փարպեցու այս վկայությունը, փորձում են «ապացուցել», թե, իբր, Վարդան զրավարը միայն իր դավանանքի, անձնական հոգու փրկության մասին մուսուղու, դիվանագիտական ձիրքից զուրկ, տարայուն մի անձնավորություն էր:

Իրավ է, սպարապետ Մամիկոնյանն իր ազգային հավատքին անվերապահորեն նվիրված անձնավորություն էր: Բայց եթե նա այդ առաքինությամբ օժտված չլիներ, չէր կարող դառնալ իր ժողովրդի խոճի ազատության պատվախնդիր պաշտպանը: Ուրեմն, հենց դրա մեջն էլ պետք է նկատել պաշտելի զրավարի արժանիքը: Նրա ցուցաբերած զրավարական մեծ վարպետությունը Սոլվանից պատերազմում և Ավարարում, նրա անօրինակ խիզախությունն ու հեռուսական մահը՝ իր ժողովրդի փրկության ի խնդիր, ինքնաստիճայան, վկայում են, որ նրա ոգուն խորթ էին իր անձի մասին մուտքավելու ձգությունները:

Պատմությունց հայտնի է, որ Վարդան Մամիկոնյանը և Կահան Ամասունին ժամանակի ամենակրթված հայ իշխաններն էին, սահմակ-մերուպայն դրդոցի արածնավոր սահմերը: Սահմանակ Վարդանը անձամբ աշակերտել ու դաստիարակվել է իր պապի՝ Սահմակ Պարթևի մոտ, նրա իմաստում շնչի տակ, մի մարդու, որ բազում առաքինությունների կողքին կարող է, իրավամբ, դասվել նաև հայոց դիվանագիտական մտքի ամենապատկանելի դեմքերի շարքը: Ուրեմն Սահմակ Պարթևի աշակերտին դիվանագետն շճանաչելու պնդությունը զուրկ են տրամաբանական հիմքից: Մեծ Սահմակը չէր կարող իր միակ ժամանգին՝ Վարդանին չհաղորդել իր գիտելիքների ամբողջ պաշարը:

<sup>21</sup> Եղիշէ, նշված աշխատություն, էջ 49:

<sup>22</sup> Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 146:

Ինչ վերաբերում է, թե սպարապետ Մամիկոնյանը ինչու սկզբում չէր հաշտվում հայարարների ստերես որացման մասին որչման հետ, ապա դրա համար կային հիմնակիր պատճառները: Զորավարը դեմ չէր ստերես որացմանը, այլ անընդունելի էր համարում հախարարների այդ մասին առաջարկած պայմանները: Ղազար Փարպեցու վկայությամբ հախարարները սկզբում «...յայ միտու առ վայր մի համանեցան և հաստանեցան, եթէ ոչինչ գոյ մեռ հնար զերծանել յորդայթէս ...բաց եթէ առ ծամ մի յանձն առնումք պատճառանօք գիրամանեալու նոցա. և երթեալ հիրաքանչիր աշխարի, այնուեալու կամ կեամք ծառայելով ճշմարին հաւատոյն Քրիստոփի՝ որ ծնաք սպազմին նորոգութեամբ... կամ թողեալ զաշխարի՝ գնամք հիրաքանչիր յօտարութին կնաւ և որդուվք»<sup>23</sup>: Նախարարները իրենց այս համաձայնությունը հիմնավորում էին Ավետարանի այն պատվիրանով, որն ասում է. «Յորժամ հապածեսն զմեզ ի քայարէս յասմանն՝ փախչիչք ի միւսն»<sup>24</sup>:

Նախարարների այս պայմանը հախատեալում էր. մի կերպ ազատվել Տիգրոնի ծուղակից, վերադառնալ տեղերը, շարունակել ազգային դավանանքը: Խև եթե դա անհնար լինի, թողեալ երկիրը և, ընտանիքով, բռնել օտարության ճամփան: Հազկերտի սպազմիից կարելի էր գուշակել, որ պարսիկները թույլ չեն տա հախարարներին ազատորեն շարունակելու ազգային պաշտպանելը, և նրանք, ստիպված, թեռանալու էին հայրենի երկրից: Այս դեպքում ի՞նչ էր սպասում հայրենի երկրին, ինչպէս էր դասավորվելու հայ անպատճան, անգուխ և լրված ժողովրդի ճակատագիրը՝ պարսկական գինվորական բռնությունների պայմաններում:

Վարդան զրավարը հրավագիրուն կըտրականապես մերժում էր այս դիրքավորումը: Նա չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ օրհասական պահին, հանուն անձնական ապահովության, հայ իշխանը թույլ տա լրեւու հայրենի երկրիը, դիմելու փախուստի: Այս պատճառով էլ զրավարը ընդունում է առերես որացման պայմանը միայն այն դեպքում, եթե «երիցունց աշխարհաց տառութեարքն և սեպութքն» համաձայնվում են հայրենի երկիրը պարսկական բռնություններից զենքով պաշտպանելու գաղափարին. «Բերէին այնուեալու և զուրք Աւետարանն, եղեալ ամեննեցունց առ հասարակ զենու ի վերայ երդուուին ասելով. եթէ դրու նեյ առ վայր մի կարասցես յանձն առնուլ պատճա-

<sup>23</sup> Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 141—142:

<sup>24</sup> Անդ, էջ 142:

ուաօք զասացեալ թագաւորին, և գերծուցեալ զմեկ լորոգայթիր թշնամոյն յարձակմանց, ամենայն ասացեոց ի քեն լուցուր և արացուր, դեղով զանձին ի վերայ ուստին սրբութեան, և յեղով զարին մեր ի վերայ ամենայն աշխարհին խրկութեան»<sup>25</sup>:

Հազկերտը թերևս հափառապով հախարդերի առերես ուրացությանը, ինու ունենալով, որ սրբը օգնելու են Հայաստան ուղարկելիք իր մոգերին ու զորքերին՝ պարսկական դավանանքը տարածելու գործում, հրամանով սահմանում է բռնությունը գործադրել «մինչև ի հասաւորէ ի հաւասարոց»<sup>26</sup>: Պարսից մոգերն ու զորքերը հախարդերի հետ Հայաստան են հասնում 450 թվականի գարնանը: Ուրեմն մինչև հավասար ամիս (օգոստոսի 6-ը) մոգերն աշխատելու էին համոզելու եղանակով տարածելու իրենց դավանանքը:

Այս կացությունից դիվանագիտորեն օգտվելու, ապատամբության գործը ավելի հանգամաներեն նախապատրաստելու նկատառումներով, Վարդաններ, Տիգրոնից վերադառնալուց հետո, շարունակում են առերես ուրացման քաղաքականությունը: Հոգեվոր դասը, որը մինչ այդ ուրքի էր հանել հայ ժողովրդին, «ուրացեալ» նախարարներին, պարսից մոգերին ու զորքերին հակահարված հասցնելու համար, երբ ճշտում է ուրացության առերես լինելու հանգամանքը, խաղաղություն է, համակերպիում ստեղծված պայմաններին:

Զանքը է մոռանալ, որ առերես ուրացման դիմակը ծպտյալ և սահմանափակ վիճակի մեջ էր դնում հայ իշխանների գործունեությունը: Այս պատճառով էլ հոգևոր դասը, որի ձեռքումն էր ապատամբության գաղափարական դեկը, փաստորեն գլխավորում էր հայ զինված պայքարը կազմակերպչուն նախապատրաստելու գործը:

Դազար Փարպեցին վկայում է, որ այս օրերին, Վարդան զորավարը տեսնելով, որ պարսից մոգերն ու զորքերը գրավելով Հայաստանի պաշտպանական նշանակություն ունեցող վայրեղը՝ ամենուրեք կառուցում են իրենց պաշտամունքային հաստատությունները՝ օգտագործելով հայ հայոց սրբավայրերը. «Տեսեալ զայս ամենայն չարիս»<sup>27</sup>, որոշում է ընտանիքով փոխադրվել Հունատան:

Այս վկայությունը նույնպես զենք է դար-

<sup>25</sup> Դազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 151:

<sup>26</sup> Եղիշէ, Աշված աշխատություն, էջ 52:

<sup>27</sup> Դազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 162:

<sup>28</sup> Անդ:

ձել մի քանի մոտավորականների ձեռքին՝ զորավարի հասցեին «դասալիք», «աշխարհից ձանձրացած», «փախատական» և նման այլ բամբասանքներ հորինելու համար: Բայց «դասալիք» կամ «փախատական» անձնավորությունը ինչպես համարձակվեց իր գնդով խիզախելու թշնամու երեք անգամ գերազանցող ուժի դեմ: Նրա ինչի՞ն էր պետք, Տիգրոնում եղած օրերին, հարկադրելու երեք երկրների իշխաններին, հայրենիքը լքելու փոխարքեն, մեալ տեղերում և «դնել զանձին ի վերայ ուստին սրբութեան», եղեղ «զարին ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան»: Եվ մի՞թե հայոց հոգեսր և նախարարական գործիչները այնքան միամիտ մարդիկ էին, որ կարող էին իրենց այլատամբության բանակի հրամանատրությունը վատահել մի «դասալիք» կամ «փախատական» մարդու: Սի խոսքով Վարդան զորավարի հասցեին հորինած այս կարգի «մեկնաբանությունները» գիտական արժեք չեն եերկայսցնելում:

Արդ, ճշտենք զորավարի Հունատան «գայթելու» նպատակը:

Նոյն Ղազար Փարպեցու վկայությամբ Հունատանի «ճամփան բռնած» Վարդան Մամիկոնյանն ընտանիքով կանգ է առնում Բագրեանդի Արամանա գյուղում, որը սահմանակից էր Բանենին և Տվարծատափին, ու որոշում է «սակա ինչ ատորս» հանգրստանալ<sup>29</sup>: Զորավարի հեռանալը մեծ անհանտություն է պատճառում հայոց հոգեվոր դասին և պվագանուն<sup>30</sup>: Այս առիթով Ծրանք արտակարգ ժողով են գումարում: Մտքերի փոխանակության ընթացքում ժողովականները ընդհանուր համաձայնության են գալիս պատգամավորություն ուղարկել և «աղաշանօք դարձուցանել» հայոց սպարապետին<sup>31</sup>:

Մարգան Վասարը ժողովի անունից նամակ է կազմում ուղղված Վարդան զորավարին: Նամակն ստորագրում ու մատանիներով կնքում են թէ՝ մարզպանը, թէ՝ ժողովին մասնակցող բոլոր պավագան նախարարները: Նամակի հետ զորավարին են ուղարկում Ավետարան, որին միացված էին նախարարների ստորագրությունները և պատճառում հավատարիմ մնալու մասին<sup>32</sup>: Զորավարին համոզելու և ես բերելու նպատակով, կազմվում է հանձնաժողով, որի կազմում մտնում էին Ղևոնդ երեցը, Երեմիա երեցը, Խորեն երեցը, Ար-

<sup>29</sup> Տես Դազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 165:

<sup>30</sup> Տես անդ, էջ 166:

<sup>31</sup> Տես անդ, էջ 167:

<sup>32</sup> Տես անդ:

շամիր Արշարունին, Հմայակ Դիմաքսյանը, Գաղորի Սքելյանը:

Ընդունելով պատգամավորությանը, ծառթանալով իրեն հասցեագրված համակին և իշխանների երդումին՝ Վարդան զրավարը հայութարարում է. «Եթով զմեր և այս զոգոց խնդրեմք օգուտն, այլ և ընդ այլոցն ինամբ ընդ փրկութեան: Եթով ոչ որ փախոցեալք եմք յերիշուիք ոք ինչ սրոյ կարծիք զայս զմենց, յորմէ ոչ ոք երբեք զանգիստակ յազգին մարում, և ոչ երբեք. և թէ որպէս ի վերայ ընկերի բարոյ՝ ստակ քան զանձին եղեալ է այս տոհմի, զամ և ամենայն դուք Հայք գիտէք ստուգութեամբ ի պատութենէց, գրոց, և ի լսելոյ ձեր յասգաց: Բայց ի Շենգաւոր խարեւութենէն ձերմէ՝ զոր արարեալ և ձեր ընդ նախմինս մեր հանապազ, զայս ամենայն իշխով, գնացեալ եմք լինել անձնապործք. որպէս ցանկ ձեր մղեալ է մեզ ի նեղ և ձեր անձին ի բաց ունելով՝ մեր միայն ազգ պատահեալ է վշտաց մեծաց և մահոց: Բայց սուրբ և երկնաւոր հրահրակիդ Անետարանին՝ ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգէս, և ոչ մեք կամք. քա լիցի»<sup>35</sup>:

Այս հայութարարությունից հետո Վարդան զրավարը «կամակցութեամբ երանելի եղբարց և սիրելեաց» անհապաղ վերադառնում են «սու ընկերուն ի բանակն Հայոց»<sup>36</sup>:

Այս վկայություններից երևում է, որ Վարդան զրավարը, Հունաստան «գաղթելոյ» փոխարքն, փոխարքուն է Արամանա գյուղը, որ «հանգստացել» է այնքան ժամանակ մինչև հայոց հոգեոր պետերն ու իշխանները արտակարգ ժողով են գումարել և պատգամավորություն ողարկել «աղաշանօք» հրան «դարձուցանելու»: Սա էլ ցուց է տախի, որ զրավարը, հայ ժողովորդի համար ստեղծված տագնապայի օրերին, Հունաստան գաղթելու մոտադրություն չի ունեցել. Այսպէս նա չէր կարող կանգնել կես ճանապարհին, համարել ամբան երկար և, մանավանդ, ետ կանգնել իր որոշումից ու վերադառնալ: Ուրեմն զրավարի Հայաստանից «հեռանալու» խորհուրդը այլ պատճառներ ուներ:

Ենթած վկայություններից երևում է, որ սպարապետ Մամիկոնյանը վստահ չի եղել հայ իշխանների վճռականության վրա: Անվաստահության համար յերևան հիմք են ծառայել մի շաք էական գործուներ: Այսպէս. Տիգրոնում իշխանները դժվարությամբ են հաշուվում զենքի դիմելու գաղափարի հետ: Ալստեղ սրբազն դաշինքին հավատարիմ մասին ենթում են ընդունել միայն

<sup>35</sup> Ղազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 51:

<sup>36</sup> Անդր, էջ 171:

<sup>37</sup> Անդր, էջ 171:

տապ նախարարներ, մինչդեռ Հայաստանում կային շորջ քանի ավագ և հիմնելի չափ ոչ ավագ իշխանական տներ: Հազկերտը, գգուշության համար, պատան էր վերցրել վրաց Աշուաք բդէշին և Վասակ մարզպանի երկու որդիներին, մի փաստ, որը կարող էր բացասարար անդրադառնալ մարզպանի հավատարմության վրա՝ ուստի միաբանության հայ իշխանները առավել էին պարագաների ու առավական ապրուցքամբ տակ. Խագումը կայ իշխաններին այս իշխանների առաջնորդության մոգերը և պատասխանը կամքին ենթարկելու միտումով Տիգրոնը գործի է դնում ան սիրաշահումների միջոցը, կաշառքը:

Այս բարդ իրադրության պայմաններում բացաված չեն հայ իշխանների տասանումների, թուլակամության, որացության և դավաճանության դեպքերը: Զորավարը նկատի ուներ նաև անցյալի փորձը, երբ հայ իշխանները Մամիկոնյաններին մղում են վտանգի առաջին գիծ և, վճռական պահին լքելով հրանց, եռ էին կանգնում ու պատճառ դառնում «վշտաց մեծաց և մահոց»<sup>38</sup>:

Այսպիսով Վարդան զրավարը, ապլստամբության բանակի հրամանատարությունը ստանձնելուց առաջ, համոզիչ հիմքեր ուներ ստուգելու հայ իշխանների դիրքը ապստամբության հարցում, հրանց նվիրվածությունը ուստի միաբանությանը, պարսկական բռնություններին ու սիրաշահումներին կող չգնալու հրանց վճռականությունը: Մի խորոք զրավարի Հունաստան «գաղթելոյ» խորհուրդն էր. դիվանագիտորեն ջշտել հայ իշխանների հետ գինակցելու հուսալիությունը: Այս պատճառով էլ արտակարգ ժողովին մասնակցող իշխանները, զրավարին համոզելու, եռ թերելու իրեն գործնական միջոց, դարձյալ Ավետարանի վրա ընդունած երդումով, հավաստում են իրենց նվիրվածությունը ուստի միաբանությանը: Սրբազն նոր երդումը զրավարի համար ամենացանկալի երնույն էր. «Բայց սուրբ և երկնաւոր հրահրակիդ Անետարանին՝ ոչ կացեալ ոք է ընդդէմ ի մեր ազգէս, և ոչ մեք կամք. քա լիցի»<sup>39</sup>:

<sup>35</sup> Եղիշէ, Աշված աշխատություն, էջ 51:

<sup>36</sup> Ղազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 171:

<sup>37</sup> Ղազար Փարպեցի, Աշված աշխատություն, էջ 171:

Ղազար Փարպեցու վկայություններից մեջ տեսվում է նաև, որ Վարդան զորավարը ժամանակի այն առաջին դեմքն էր, որը կարող էր գլխավորել և գլխավորեց հայոց համաժողովրդական ապստամբությունը սասանյան բռնադատիչների դեմ, որին անվերապահորեն վստահում էին հայոց եկեղեցին և հայրենասեր իշխանները: Դա է հաստատում թեկող այն փաստը, որ Արան եռ թերելու մտահոգությունը հարկադրում է հոգեվոր դասին ու նախարարներին արտակարուժող գումարելու, Արան համոզելու համար սրբազն նոր երդում ընդունելու, Արան «դարձուցանելու» համար ամենահեղինակավոր մի պատգամավորություն ուղարկելու՝ Ղևոնդ երեցի ղեկավարությամբ: «...Զի առանց նորա մեր այս ամենայն կամք և խորհուրդը՝ և ոչ մի ինչ վճարին»<sup>38</sup>:

Վարդան զորավարը արժանացել էր այս մեծ հեղինակության ու հարգանքին, որովհետև նա իր ազգային հավատքի, ազգային ապրելակերպի անկաշառ պահապանն էր, նրան հույսում էր ոչ թե անձնական, այլ ժողովրդի փրկության հարցը: «Եւ ոչ զմեր ներ զուցոց խնդրեմք օգուտոն, այլ և ընդ այլոց խնամք ընդ փրկութեան»<sup>39</sup>: Նա, առաջին հերթին, մտահոգված էր օգտակար լինելու «ի վերայ ընկերի բարոյ»<sup>40</sup> և «զիոն ընկերաց հոգայր»<sup>41</sup>: Այս մտահոգության մղումով էր նաև, որ նա «առ վայր մի պատճառանօք» մինչև անգամ չէր հաճախում եկեղեցի, շարունակում էր կեղծ ուրացումը, որպեսզի օգտակար լիներ իր ժողովրդին, իր ընկերներին և վտանգի չենթարկեր Տիգրոնում պատճեն պահված Աշուաշ բերեշի և Վասակ մարզպանի որդիների կյանքը<sup>42</sup>:

Վարդան զորավարի տակտիկական և կազմակերպչական այս միջոցառումների նպատակն էր, համախմբել և պատրաստակել ազգային զինված ուժերը՝ դիմագրավելու ամեն մի անկանակալ: Նա առաջնորդվում էր ոչ թե «ի քաղաքէ յայսման» մի այլ քաղաք փախչելու, այլ «ակն ընդ ական» սկզբունքով: Զորավարի այս նախաձեռնությունների մեջ հատակորեն որվագծվում են ոչ միայն մեծ զորավարի, այլ նաև մեծ հայրենասերի, հմտութիվանագետի և ազգային հիմնալի գործի հատկությունները:

Ամառվա ամիսներին Վարդանանք շարունակում էին կեղծ ուրացության քաղաքականությունը: Հավատալով դրան՝ Տիգրոնը, ա-

ռանց փոխվեծի դիմելու, համբերությամբ կուլ է տալիս Ղևոնդ երեցի հասցրած զարեհավանան շատաշում ապստակը: Սակայն սկզբից ներ պարսիկ մոգերն ամենուրեք հանդիպում էին հայ բնակչության արհամարհանքին և, իրենց դավանանքը տարածելու գործում, հաջողությունների չեին հասնում: Հայ իշխանների կանալը տեսնել անգամ չեին կամենում պարսիկ մոգերին, արգելում էին իրենց երեխաններին լսելու անկուչ «դաստիարակների» բարողը: Տղամարդիկի թեև առերես ցոյց էին տալիս, թե, իբր, ընդունել են պարսկական դավանանքը, բայց ներքուստ զգվում էին մոգերի կենցաղային սովորություններից, հաճախ չեին կարողանում զայել իրենց ատելությունը, մինչև անգամ խորշում էին նրանց հետ հացի նատել<sup>43</sup>:

Այս փաստերը վկայում են, որ Վարդանանքը արտաքրուստ համարվում էին Տիգրոնի հրամանին, Աերքուստ ազատություն էին տալիս, թերևս նաև խրախուսում էին բնակչության բուն դիմադրությունը, թեև պահում ժողովրդի մարտնչողական ոգին: Դիվանագիտական այս ելակետի նպատակն էր, ժամանակ շահել ավելի հանգամանորեն նախապատրատելու ապստամբության գործը և, միաժամանակ, հասկացնելու Տիգրոնին, որ հայ ժողովրդին դավանափիսելու նրա ճիգերը պարադուն են, որով թերևս հնարավորություն ստեղծվի կանխելու պարսից բռնությունները, շրջանցելու արյունահեղության վտանգը: Այսինքն, Վարդանանքը վարպետորեն զուգակցում էին ապստամբության նախապատրատումը՝ երկրի խաղաղությունը պահպանելու գործումներից հետ:

Վասակ մարզպանը, ընդհակառակն, կազմական ապահության դավանանքը Սյունիքի հայությանը պարտադրելու հոգւերով՝ կանգ չառնելով բռնությունների, սիրաշահումների, կաշառաւության առաջ<sup>44</sup>:

Ստեղծվում էր քաղաքական նոր իրադրություն, մարզպանը դրժում էր հայ իշխանների հետ հաստատած սրբազն դաշինքը, Ավելուանի վրա Տիգրոնում և արտակարգ ժողովում ընդունած իր երդումները, անդամակառում էր երկրի մարտական ուժերը: Վասակն ու իր համախմբները դասենում էին Տիգրոնի գործակալները, նրա բոնի դավանափիսության հենարանը հայոց թիկունքում: Վարդանանքը արդեն գործ ունեին ոչ միայն արտաքին, այլև ներքին, թերևս ավելի նողկալի թշնամու հետ: Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ հայոց պաշտպանական նշանակություն ունեցող

<sup>38</sup> Անդ, էջ 167:

<sup>39</sup> Անդ, էջ 170:

<sup>40</sup> Անդ:

<sup>41</sup> Անդ, էջ 174:

<sup>42</sup> Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ

172:

<sup>43</sup> Տես անդ, էջ 174—175:

<sup>44</sup> Տես Եղիշէ, նշված աշխատություն, էջ 63—65:

բերդերը, քաղաքներն ու ավանները գտնից վկա՞ էին պարսիկների ձեռքին, կարող էին օգտագործվել որպես թշնամական հետակետներ ապատամբույժան թիկունքում:

Այս կացության պայմաններում աստիճանաբար բացահայտվում էր նաև նայ իշխանների որացության խարսիկը բնույթը, որի մասին պարսիկ մոգերը տեղեկաբորում էին Տիգրոն<sup>45</sup>: Մոտենում էր նաև նավասարդ ամրոց, երբ պարսիկները, թագավորի երամանի համապատասխան, վկա՞լու էին բրոնզությունները<sup>46</sup>: Ուրեմն Վարդանանք այլևս չէին կարող առաջնորդվել նախկին գործելակերպով: Կեղծ որացության քաղաքականությունը կորցնում էր իր գործնական նշանակությունը: Դիվանագիտական ճանապարհով արյունահետությունից խոսափելու ճիգերը դառնում էին ամենատ: Դիվանագիտությունը սպառում էր իր դերը. խոսքը տրվելու էր զենքին:

Քաղաքական այս շիկացած մթնոլորտում, հայոց հոգերու դասի նախաձեռնությամբ, գումարվում է երկրի հայրենասեր ուժերի գաղտնի ժողովը: Կացությունը պահանջում էր. կամ հարմարվել Տիգրոնի բռնություններին և ուղի հարթել երկրի պարսկացման համար, կամ արյուն թափել և նայ մնալ: Ժողովը նախընտրում է երկրորդ միջոցը. վճռում է պարզել ապատամբության դրոշը: Ժողովի որոշման համապատասխան ապատամբույժան ուժերը վերջ են տախիս կեղծ որացությանը, դիմում զենքի, գրավում պարսիկների զավթած հայոց բերդերը, քաղաքներն ու ավանները, ոչնչացնում պարսիկների պաշտամունքային կայսաներն ու հաստատությունները, մաքրում ապատամբության թիկունքը պարսկական զորքերից ու մոգերից, ոտքի հանում նայ բնակչությանը պարսկական առաջիկա բրոնզություններից երկիրը պաշտպանելու համար: Ապատամբները նաև ձերքակալում են Վասակ մարզպանին, բայց վերջինս կարողանում է փրկվել ժողովրդական դատաստանից՝ ապատամբության ուխտին հավատարիմ մնալու մասին իր ընդունած կեղծ երդումով:

Վարդանանց հետագա գործունեությունը գինված պարարի նախապատրաստման պատությունն է, պայքար, որը վեհորեն դրսորդվեց Ավարայի պատմական դյուցազնամարտում և հայթանակով պակլեց դրան հաջորդող հերոսական գոտեմարտերում:

Այսպիսով, Վարդանանք, Տիգրոնի քմա-

համ բռնությունների օրերին, դիմեցին իննեցից կախված դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցներին երկրի խաղաղությունը պահպանելու, անպատեհ արյունաթղթությունից խոսափելու համար և, միաժամանակ, վարպետորեն օգտագործեցին կեղծ որացության քաղաքականությունը ժողովրդական ուժերը համախմբելու և թշնամու հարվածին հարվածով պատասխանելու: Նրանք հետատեսորեն կուսում էին, որ պարսկական բռնությունների պայմաններում, հետազոտության եղանակով, ամենասական կարչի ազգագիրը պահպանության մասին առաջարկությունը: Նրանք գգում էին, որ ստեղծված պայմաններում ժողովրդի փրկության ամենաբուազի միջոցը զինված ապատամբությունն է: Նրանք նաև համոզված էին, որ հայ ժողովորդը իր ընդերքում անթեղում է այն հրդեմը, որով կարենի կլիմի խափանել սասանյան բռնադատիչների չարագուշակ հետապնդությունը: Եվ նրանք չխափանեցին:

Երբ հնեց օրիասական ժամը, Տիգրոնը սպառնաց զեերով, Վարդանանք պատրաստ էին առաջնորդելու հայոց գնդերը ի մարտ և ժողովրդի փրկության զինականահին դնելու իրենց թանկագին կյանքը:

Ահա Վարդանանց դիվանագիտության էությունը: Այս դիվանագիտությունը հենվում էր ժողովրդի մարտնչողական ուժերի վրա, իր հաշողությունը պայմանավորում այս ուժերի ամրապնդումով, հզորացումով: Նըրանք լավ գիտեին, որ առանց այս հետարանի դիվանագիտությունը խոնդալի խաղալիք է թշնամու ձեռքին:

Վասակ մարզպանը, պարսկական հիգակների օգնությամբ հայոց թագավոր դառնալու միտումով, թեև դրժեց սրբազն ուխտը, երկիխելեց հայոց միարանությունը, նողկալի քայլերի դիմեց ապատամբության շարքերը կազմակուծելու, Հայոց, Վրաց, Աղվանից դաշինքը խափանելու, Հայաստանը արտաքին օգնությունն զրկելու, և զինվորական ուժով անցավ թշնամու կողմը, եղբայրական պատերազմ հայտարենց իր խոճի ազատության համար մարտնչող հայ ժողովրդին, բայց անկարող եղավ ընկերությունը Վարդանանց և Ղևոնյանց անկուտրում վեճուականությունը: Հայոց ապատամբությունը հասավ իր նախակին, պահովվեց ժողովրդի թե՛ բարոյական և թե՛ գործնական հայթանակը:

Վարդանանց օրինակը դարձավ ժողովրդի գոյատևման հոգեկան և բարոյական բազմադարյան սեռունդը, նրա ոգեշնչման անսպառ աղբյուրը, ապատության ու հայթանակի ձգող նրա բարոյական և թե՛ գործնական հայթանակը:

<sup>45</sup> Տես Ղազար Փարպեցի, նշված աշխատություն, էջ 174—175:

<sup>46</sup> Տես Եղիշէ, նշված աշխատություն, էջ 51: